ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ» ՍՈՑԻԱԼ-ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԿՐԹԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ

# ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Խումբ ՝ Հայոց լեզու և գրականություն

Թեմա ՝ Պատմավեպի ուսուցման առանձնահատկությունները ավագ դպրոցում

Հետազոտող՝ Արևիկ Մանգասարյան
Սյունիքի մարզի Խոզնավարի միջնակարգ դպրոցի հայոց լեզվի և գրականության ուսուցչուհի

Ղեկավար՝ Նելլի Ղուշունց

ԳՈՐԻՍ 2022

Մենք ամեն ինչ դպրոցից ենք սպասում, բայց ժողովուրդը ինքը մի մեծ դպրոց է, որին պետք է կրթել, որին պետք է ուղղություն տալ…

Իսկ դա այլ կերպ չէ կարող անել, եթե չենք տա նորա ձեռքը ընթերցանության գրքեր:

## ՐԱՖՖՈՒ ՄՏՔԵՐԻՑ

Անմահ հոգի, որ հայի բազմադարյան տառապանքով ու նրալավ ապագայի կարոտով լցված՝ քո տաղանդի կախարդական ուժով դուրս կանչեցիր անցյալի մութից ու ապագայի անհայտությունից հրապուրիչ պատկերներ ու հերոսական դեմքեր ու նրանցով վառեցիր, ոգևորեցիր վիատներին,որ տկարներիս համարձակություն ներշնչեցիր ու ղրկեցիր հզորների դեմ՝ նահատակության արյունով լվանալու և սրբելու տկարության արտասուքը, որ անհանգստություն տվիր հայ ժողովրդի հոգուն և ուղղեցիր նրան դեպի ազատագրության ճանապարհը:

## ՀՈՎՀ. ԹՈՒՄԱՆՅԱՆ

## ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Գեղարվեստական մյուս գործերի հետ համեմատելիս պատմավեպն ավելի մեծ ուշադրություն է պահանջում և՛ գրողից և ուսուցանողից, և՛ աշակերտից:
Դպրոցը ազգային դաստիարակության հզոր գործոն է, նա է կերտում ապագա քաղաքացուն, դաստիարակում հայրենասեր և մարդասեր անհատ:
Այսօր երեխաները խուսափում են ծավալուն գործեր կարդալուց, չեն կարդում պատմավեպեր, ուսուցչից է կախված՝ կտրամադրի նա իր սանին վեպի ամբողջական ընթերցման, սիրել կտա իր հայրենիքի պատմության հերոսական դրվագները, թե սանը կբավարարվի դասագրքի թեթև ակնարկով կամ համացանցում տրված կարճ բովանդակությամբ:
Պատմավեպն ուսուցանելուց առաջ ուսուցիչը պետք է ազդի երեխաների մտածողության վրա, դրդի նրանց հայրենասիրության, երկը ուսումնասիրելու ցանկություն առաջացնի:Որևէ պատմավեպ ուսումնասիրելուց առաջ աշակերտը ն ախ՝ պետք է իմանա գրության շարժառիթը, որովհետև առանց անհրաժեշտության կամ այլ խթանի պատմավեպ չի գրվում:Օրինակ Ռաֆֆին <Սամվելը> գրել է 19-րդ դարի ութսունական թվականներին, երբ ցարական կառավարության հրամանով փակվել են հայկական դպրոցները: Մուրացանը <Գևորգ Մարզպետունին> գրել է, 1895-1896 թթ ջարդերի շարժառիթով, Դ. Դեմիրճյանը <Վարդանանքը> գրել է 2-րդ աշխարհամարտի տարիներին:Ուսուցչի 1-ին խնդիրը այն է, որ աշակերտին ցույց տա պատմական ծանր ժամանակահատվածների աղերսները, գրողի միտումը՝վեպի և նախկին իրադարձությունների միջոցով ազգին զորավիգ լինելու:
Պատմավեպի գրական- գեղարվեստական արժեքը հասկանալուց առաջ աշակերտը պետք է գնահատի դրա պատմականությունը, արժանահավատությունը; Այդ նպատակով աշակերտին պետք է ծանոթացնել վեպի սկզբնաղբյուրներին : Մեր խնդիրն է հետազոտել վեպի դարաշրջանը, պատմական հիմքը, գրողի տեսակետը պատմության մասին:
Դիտարկենք պատմավեպի ուսուցման առանձնահատկությունները Ռաֆֆու <Սամվել> պատմավեպի օրինակով:

Հայ գրականության մեջ, հայրենասիրություն դաստիարակելու լավագույն երկերից մեկը «Սամվել» պատմավեպն է:Այն ավագ դպրոցում ուսուցանվող Ռաֆֆու միակ ստեղծագործությունն է: Ռաֆֆին ռոմանտիզմի խոշոր ներկայացուցիչ է:Դպրոցական ծրագրում նախատեսվում է ուսումնասիրել Ռաֆֆու կյանքը, ստեղծագործությունները, նշանավոր երկերը և «Սամվել» պատմավեպը: Հիմնական շեշտը դրվում է վեպի գրության շարժառիթների, պատմական հիմքի և գլխավոր կերպարների վերլուծության վրա: Հանձնարարում եմ սովորողներին

ընթերցել բնագիրը, որպեսզի դասն աշակերտակենտրոն սկզբունքով ուսումնասիրելու ժամանակ կարողանանք կատարել ռացիոնալ աշխատանք:Ազգային լուսավորության գործում Ռաֆֆին մեծ նշանակություն էր տալիս գեղարվեստական գրականությանը, հատկապես վեպին:Բայց վեպի համար հարկավոր է ընթացիկ, շարժուն կյանքը յուր բոլոր երևույթներով, և ոչ թե թագավորների կամ իշխանների աշխարհակալության կամ պարտության չոր ու ցամաք տարեգրությունը:Մի շարք հոդվածներում, հատկապես «Սամվել» վեպի առաջաբանում , նա անդրադարձել է պատմավեպի տեսության հարցերին:

## «ՍԱՄՎԵԼ» պատմավեպի ուսուցումը

Մուտքի դասի ժամանակ գրատախտակին գծում եմ նախապես մշակված դասի կառուցվածքի քարտեզ.

| |
|---|
| Մուտքի դաս |

Հաղորդումներ (տեսակները)

| |
|---|
| Գրական նյութ |
| Պատմական նյութ |
| Օժանդակ, լրացուցիչ նյութեր |

Երկի վերլուծություն

| |
|---|
| Աշակերտակենտրոն սկզբունքով |
| |

Սյուժե(բաղկ.մասեր)

| |
|---|
| 1.Հառաջաբան |
| 2.Առաջին գիրք |
| 3.Փակագծերի մեջ |
| 4.Երկրորդ գիրք |
| 5.Երրորդ գիրք |

Թեմայի բացահայտում

Տեղեկություններ

1. Գրման ժամանակաշրջանը

2.Պատմականն ու արդիականը

Բովանդակություն
Գաղափար

Կոնֆլիկտ

3.Հեղինակի հայացքները

1.Հասարակական

2.Անձնական

Գեղարվեստական արժեք

Աշակերտների

արժեքայի

համակարգի ձևավորում

Կերպարներ

1.Լեզուն, ոճը

2.Բառապաշարը

3.Խոսքի պատկերավորությունը

4.Նկարագրական խոսք

1.Ուսուցողական ճանաչողական

2.Դաստիարակչական

| |
|---|
| 3.Զարգացող ուսուցում |
| 1.Սամվել |
| 2.Վահան Մամիկոնյան |
| 3.Մերուժան Արծրունի և այլն: |

Ռաֆֆին ոչ միայն խոշոր պատմավիպասան է, այլ պատմավեպի տեսաբան: Մի շարք հոդվածներում, հատկապես «Սամվել»վեպի հառաջաբանում նա անդրադարձել է պատմավեպի տեսության հարցերին, առաջադրել դրույթներ, որոնք նորույթ են հայ քննադատական մտքի պատմության համար: «Պատմական վեպը,- գրում է Ռաֆֆին,- մի ժողովրդի պատմական կյանքի նկարագիրն է: Նա պատկերացնում է յուր մեջ, թե որպես ապրել է և որպես գործել է մի ժողովուրդ, պատկերացնում նրա բարքը, վարքը, սովորությունները, պատկերացնում նրա մտավոր և բարոյական հատկությունները…»:

Ռաֆֆին որպես վիպասան ուսումնասիրել է պատմական իրադարձությունները, հայրենասիրական դասեր քաղել, և հենվելով պատմական անցյալի վրա, կանխատեսել է ապագան:

Ինքնին ստեղծվում է միջառարկայական կապ«Հայոց պատմություն» և «Հայ գրականություն» առարկաների միջև: Այս պատմական դարաշրջանը հայ ժողովրդի համար ամենադժվարին ժամանակահատվածներից է, որի մասին շատ նյութեր են ստեղծվել: Ռաֆֆինն հիմնական նյութը վերցրել է Փավստոս Բուզանդի և Մովսես Խորենացու պատմություններից:Մեր պատմիչները չափազանց նեղ ծավալի մեջ կարողացել են ընդգրկել հույժ կարևոր ու հարուստ տեղեկատվություն: Նրանք

պատմում են Արշակ Երկրորդի մահվանից հետո Հայաստանում կատարված դեպքերի մասին, որոնք կապված էին Մերուժան Արծրունու ու Վահան Մամիկոնյանի անունների հետ: Ահա Ռաֆֆու բերած հատվածները.«Այնուհետև Վահան Մամիկոնեան և Մերուժանն Արծրունի, սոքա երկոքեան արք պիղծք անորենք էին,ապստամբեալք էին յուղտէ աստուածապաշտութեան, և զանաստվածն Մազդեզանց աղանդն յանձն առեալ պաշտէին, սկսան այնուհետև երկրին Հայոց աւերել զեկեղեցիս՝ զտեղիս աղոթից քրիստոնէից…Ատրուշանս շինէին ի բազում տեղիս և զմարդիկ հնազանդէին օրինանց Մազդեզանց…և զորդիս և զազգայինս իւրեանց տային յուսումն Մազդեզանց:Ապա որդի մի Վահանայ, անուն Սամուէլ, եհար սատակեաց զՎահան զհայր իւր, և զՈրմիզդուխտ զմայր իւր՝ զքոյր Շապհոյ պարսից թագավորին»(Փաւստոս Բիւզանդ, Դ դպրություն,գլ. ԾԹ): «Յետ մահուանն Արշակայ զումարեաց Շապուհզօր բազում ի ձեռն Մերուժանա և արձակեաց ի Հայս…Եւ տուեալ նմա կին զքոյր իւր զՈրմիզդուխտ…և խոստացավ տալ նմա զՀայոց թագաւորութիւնն, միայն թէ զնախարարսն նուաճելով՝ ի դեն Մազդեզանց զաշխարհս դարձուսցէ: Որոյ յանձն առեալ և եկեալ… և զամենայն կառգ քրիստոնէութեան ջանայր խափանել… և զորս

միանգամ գիրս գտանէր՝ այրէր և հրաման տայր մի ուսանիլ զդպրութիւն յունարէն, այլ պարսիկ, և մի ոք իշխեդցե յոյն խոսել կամ թարգմանել… Զի

յայնժամ գիր դպրութեան հայոց չև ևս էր լեալ, և յունականաւն վարէին եկեղեցւոյ

կարգք»(Խորենացի,Գ.գլ.ԼԶ): Տրված հատվածները ներկայացնում եմ աշխարհաբար, սովորողներին ավելի հասկանալի դարձնելու համար:

Վեպում հայրենասիրական վեհ գաղափարների կրողը Սամվելն է. ով սպանում է հարազատ հորն ու մորը, ինչպես ավանդել է Մովսես Խորենացին. «Բայց Սամվել Մամիկոնյանը ձեռք գցելով Խոսրովի թուղթը և նախարարների թղթի պատճենը՝ նրանցից զատվեց ու գնաց կայսեր Արկադի մոտ: Որովհետև նա սպանել էր իր հորը՝ Վահանին՝ ուրացության համար, ինչպես և մորը ՝ Տաճատուհուն, ուստի երկյուղ կրելով պարսիկներից և Արծրունիներից՝ իր քեռիներից, չէր համարձակվում հույներից անջատվել »:

Դասի այս հատվածում տալիս եմ կերպարների վերլուծության գծագիր և առաջարկում բնագիրն ընթերցած սովորողներին, որպեսզի նրանք պատասխանեն առաջադրված հարցերին և անեն եզրահանգումներ:

**Կերպարների զարգացման աղյուսակ**

| Կերպարներ | Երբ ենք առաջին անգամ ծանոթանում | Ինչպես են նրան վերաբերբում մյուս կերպարները | Բնութագրելմեկ նախադասությամբ | Արտահայտել սեփական վերաբերմունքը |
|---|---|---|---|---|
| Սամվել | Նրան ծանոթանում ենք հենց վեպի սկզբից ով սկսում է քայլեր ձեռնարկել ամոթալի լուրը իմանալուց հետո: | Մյուս բոլորը նրան խորհին ակնածանքով են վերաբերվում և մեծ սեր դրսևորում վերջինիս հանդեպ: Ընդունում են ինչպես իրենց ազատագրական պայքարի ռահվիրա: | Սամվելը ազգանվեր, չափազանց հայրենասեր հերոս էր , զոհում էր բացարձակ ամեն ինչ հայի ազգային դիմագիծը անարատ պահելու համար; | Նրան համարում եմ իդիալական կերպար , քանզի հետագա սերու-նդների համար քաջ ուհամարձակ մարդու օրինակ դարձավ: |

| | | | | |
|---|---|---|---|---|
| Մուշեղ Մամիկոնյան | Մուշեղին ծանոթանում ենք, երբ ծավալվում են ռազմական գործողությունները պարսիկների դեմ: | Բոլորը հարգում և պատվում էին այս հայրենանվեր հերոսին: Նա գլխավորում էր հայերի ռազմական ուժերը: | Աչքի էր ընկնում իր քաջ, համարձակ խառնվածքով , ինչպես նաև դիվանագիտական և ռազմական փայլուն գործչի ունակություններով: | Հավասարապես հարգումև ընդունում եմ ինչպես Սամվելին, այնպեսև Մուշ եղին գնահատում եմ նրա արժանա պատիվ քայլերն ումարդասիրակ անարժեքները: |
| Վահան Մամիկոնյան | Ծանոթանում ենք, երբ վերջինիս դավճանության լուրը հասցնում են Ողական, | Զորավիգ էին կինը, պարսից արքունիքը որպես հարմար գործիք հայերի դեմ և իր հանցակիցը՝Մերուժանը: Մյուսները ատում էին նրանց համարելով ազգի դավաճան: | Ազգի դավաճան էր, քանի որ կարծում էր դավանափոխ լինելով և ժողովրդին էլ նույնը ստիպելով կարող էր լավ և կայուն ապագա կառուցել: | Ոչմի արդարացում չեմ գտնում նրա կատարածքայլերի մեջ, ընդունում եմնրան որպես ազգուրաց, դավա ճանի և անհեռատես քաղաքական գոր ծչի: |

| | | | | |
|---|---|---|---|---|
| Մերուժան Արծրունի | Մերուժան Արծրունուն առաջին անգամ տեսնում ենք Վահան Մամիկոնյանի Հետ: | Շրջապատողները նրան ըն դունում էին այնպես ինչպես Վահանին : Նրանից երես էր թեքել, նույնիսկ ընտանիքը ոչ միայն պարսիկների կողմն անցնելու և դավանափոխ լինելու այլ նաև Շապուհի քրոջը ամուսնության առաջարկություն անելու համար: | Մերուժանը նույնպես հեղինակի և մյուսների կողմից համա րվում է դավա ճան. քայլերի հիմնական պատճառը Շապուհի Քրոջը՝ Որմիզ դուխտին հաս նելն էր: | Կարծիքս նույնն է թե Մերուժանի, թե Վահանի մասին, երկուսն էլ արժանացան համապատաս խան պատժի: |
| Տաճատուհի | Վեպի հենց սկզբ ից ծանոթանում ենք Սամվելի մոր Տաճատուհու հետ: | Մյուս կերպարները պախարակու մ են նրան , քանի որ աջակցում էր իր ամուսնուն: Ուրացության համար սպանվում է որդուկողմից | Փառամոլ, եսասեր կին էր, ում կուրացրել էին պարսկակա ն զանձերը և ամուսնու դավ աճանության լուրը նա ընդու նեց որպես հաղթանակի ավետիք: | Բացասական կերպար է ու պարսկական գանձերի փայլի շքեղությունից կուրացած: |

Կերպարների վերլուծումն ավելի բնորոշ դարձնելու համար դասարանում ընթերցում եմ հոր և որդու հանդիպումը , որը Ռաֆֆին նկարագրում է «Արաքսի որոգայթները » գլխում: Սա վեպի կիզակետն է , որտեղ Սամվելը կատարում է բարոյական իր սխրանքը: Տեղի է ունենում սուր բանավեճ, նա կշտամբում է հորը՝ կատարված ոճրագործությունների համար , բայց ազնվապետական կամայականությամբ դաստիարակված նախարարի համար որդու խոսքերը հնչում են որպես ցնորքներ: Բանավեճը վերածվում է բորբոքված կրքի և կատարվում է անխուսափելին. «Հայրը ձեռքը տարավ դեպի յուր սուրը: Բայց որդու սուրը արդեն մերկացած էր»:

Նույնպիսի լուծում է ստանում նաև Սամվելի և մոր կոնֆլիկտը:Սամվելի արարքը կարելի է կարծել , թե հակաբարոյական է, քանի որ մեղանչում է ծնողական սրբության դեմ,սակայն Ռաֆֆին գործ ունի բարոյափիլիսոփայական վեհ գաղափարի հետ՝ազգի ու պետության ճակատագիրը վեր է ծնողական սրբությունից:

Իմ առաջադրած հարցին, թե ինչպե՞ս կվարվեին սովորողները, եթե Սամվելի փոխարեն իրենք հայտնվեին նման ընտրության առաջ, լսում եմ բազում տարբերակներ, սակայն նրանցից ոչ մեկը չի ասում,որ կսպանի սեփական հորն ու մորը՝ մեկը ծնողներին կփակեր բանտում, մյուսը՝ կփորձեր համոզել նրանց և նմանատիպ բազում պատասխաններ:Սովորողներին ներկայացնում եմ, որ Ռաֆֆին Սամվելի արարքը որակում է«նշանավոր գործ» և նշում է, որ դա «ապագայում օրինակ պիտի դառնար շատերին»:Սամվելը այս հարցը լուծում է հօգուտ հայրենիքի:Իսկ նրա հայրը և մորեղբայրը փառասիրությունից կուրացած՝բռնում են դավաճանության ուղին, այսինքն՝ հանցանքներից ծանրագույնը:

Սովորողներին անպայման ներկայացնում են նաև այն հատվածները , որոնք վիպասանը բառացի մեջ է բերել Բուզանդից: Բուզանդից մեջբերված է նաև Վասակ Մամիկոնյանի մահապատժից առաջ արտասանած արհմարհական ու արժանապատիվ պատասխանը՝ուղղված իրեն ու Արշակ Երկրորդին նենգությամբ ոչնչացնող Շապուհ Երկրորդին՝ պարսից արքային:

Ռաֆֆին քաջ գիտակցում էր պատմական փորձից ծնված եզրակացության նշանակաությունը ամեն ազգի ապագայի համար: «Սամվել»-ում կա մի պատգամ. «Մեծ հայրապետը, յուր գործակից Մեսրոպի աջակցությամբ, ստեղծեց հայոց գիրը և նոր դպրությունը: Հայոց լեզուն սկսեց թագավորել թե՛ հայոց դպրոցներում, և թե՛

հայոց եկեղեցիներում: Հայը սկսեց յուր լեզվով աղոթել և յուր լեզվով կարդալ: Եվ դրա մեջն էր օտարազգի կղերի մահը: Մինչ այդ ժամանակ, ինչպես տեսանք , հունաց և ասորաց լեզուներն էին տիրապետում և հայոց եկեղեցիներում: Բայց հայկական տառերի գյուտից հետո արտաքսվեցան նրանք: Բոլոր սուրբ գրքերը թարգմանվելով մայրենի լեզվով, թե՛ եկեղեցին և թե՛ դպրոցը դարձան բուն ազգային և ազատվեցան օտարազգի կղերի հոգաբարձությունից: Իսկ նրանց դավաճանությամբ հափշտակված կաթողիկոսությունը տևեց խիստ սակավ ժամանակ: Ահա՛ այդպես, Լուսավորչի տոհմի վերջին Լուսավորիչը՝ Սահակ Պարթևը, սկիզբ դրեց հայոց վերածնելության «Ոսկյա դարին», որով կրկին կենդանացավ Հայաստանը և ընկավ խավարի թագավորությունը…» (ՐԱՖՖԻ, հատոր-7, էջ 210):

«Սամվել»-ի հառաջաբանում մշակված են պատմական նյութի բացատրությունը և սկզբունքները : Անցյալի նկատմամբ նրա ունեցած պատասխանատվությունը պարզ է դառնում նաև գրողի հավաքած հնագույն ձեռագրերի հավաքածուի առկայությունից որոնցից երկուսը գրողի կինը՝ Աննա Ռաֆֆին վաճառել է Լոնդոնի թանգարանին:

«Հառաջաբանը» ունի ելակետային արժեք և չի կորցրել արդիականությունը հայ գրականության համար: Ս. Սարինյանը Ռաֆֆու գրաքննադատական հայացքների մասին խոսելիս կարևոր մեջբերում ունի պատմության և պատմավեպի ուսուցողական նշանակությունը ներկայացնող նրա մտքից. «ներկա իրադարձություններն միշտ էլ ստուգվում են անցյալի մեջ և հաստատվում անցյալի փորձով: Հետևաբար, պատմությունը ոչ միայն անցյալի հայելին է , այլև ներկայի խորհրդատուն»:

«Պատմությունը մի վարդապետարան է , մի դասարան է , որի մեջ ապագա սերունդը կրթվում է, զգուշանալով իր նախնյաց սխալներից և հետևելով նրանց լավ գործերի օրինակին , -գրում էր Ռաֆֆին՝ որոշակիորեն ակնարկելով պատմագեղագիտական իր միտումը, թե՝ «Ես պատմական վեպը, պատմական փաստերի համար չեմ գրում, այլ ինձ գրավող ժամանակակից շարժման համար» (Հայ քննադատության պատմություն, երկու հատորով , հատոր-1, էջ-317-318) »:

Ռաֆֆին որոշակիորեն մշակել է հայ պատմավեպի զարգացման տեսությունը : Առաջին հերթին ազգային պատմիչների հաղորդած նյութը, այնուհետև լրացուցիչ նյութեր նույն ժամանակահատվածի հարևան ժողովուրդների պատմությունից , որոնց հետ հայերը եղել են սերտ շփումների մեջ : Պատմավեպը, ըստ Ռաֆֆու , ոչ թե չոր ու ցամաք փաստեր պետք է պատմի անցյալի մասին, այլ պետք է ներկայացնի հին ժամանակների վերակենդանացած իրական կյանքը: Պատմավեպում պետք է լինեն կանանց կերպարներ, հասարակ մարդկանց կերպարներ, այսինքն՝ իրապատում բովանդակությունը կարևոր է պատմավեպի համար՝ թեկուզ Ռաֆֆին ինքը ռոմանտիզմի մեթոդը լայնորեն օգտագործել է իր գրական երկերում :

Վիպասանի բողոքը տեղին է այն առումով, որ իր ապրած ժամանակներում եվրոպական զարգացած երկրներն ունեին պատմական հարուստ թանգարաններ, որոնցում պահպանվում և ցուցադրվում էին անցյալի կիրառական արվեստը ներկայացնող առարկաները: Դա հրաշալի օգնություն էր պատմավիպասանին , մինչդեռ հայ գրողը այդ բոլորից իսպառ զուրկ էր . «Արդյոք ունե՞ք մի մուզեում ,

որտեղ հայ վիպասանը մտնելով տեսներ , թե ինչ տեսակ զգեստ ունեին , կամ ինչ տեսակ տնային կարասիք էին գործածում : Արդյոք մենք ունե՞նք մեր հին արձանները, մեր հին նկարները: Ոչինչ չունենք : Իսկ այդ բոլոր պետք են պատմական վեպի համար»(Ռաֆֆի, հատոր-7, էջ -7-8):

Պատմական նյութի գեղարվեստական սկզբունքները Ռաֆֆին կիրառել էր դեռևս իր նախորդ պատմավեպերը գրելիս՝ « Պարույր Հայկազն», « Դավիթ Բեկ»:

Պատմավիպասանին ռուսաց լեզվով ծանոթ էին համաշխարհային գրականության մեջ հռչակ վայելող պատմավեպերը: Նա գիտեր , թե ինչ հնարավորություն էր ընձեռում գեղարվեստական հնարանքը պատմական իրականություն ներկայացնելիս: Առաջին հերթին ընդհանուր պատմական ճշմարտացիություն , պատմական իրականության անխարդախ պատկեր, սակայն նաև իրավունք՝ որոշ տեղաշարժումներ կատարելու պատմական անձերի գործած և ապրած ժամանակների մեջ:

Քանի որ այս ամենը բացատրվում է միջնակարգ դպրոցում , ուրեմն շարունակ կիրառվելու է զուգահեռման մեթոդը՝ փաստը աշակերտի հիշողության մեջ ընդմիշտ մտապահելու համար: Օրինակը լինելու է Գրիգոր Խանջյանի «Ավարայրի ճակատամարտը» նկարի իմաստի ընկալումը: Պատմությունը մեզ չի ավանդել այդ հերոսամարտին մասնակցած նահատակների նկարները, մեզ հայտնի է միայն նրանց ոգու արիության փաստը՝ գիտակցված մահը որպես անմահություն ընդունածների խիզախումը: Նկարիչը դիմել է գեղարվեստական հնարանքի: Նա հայ նահատակների դեմքերը վերստեղծել է ոչ միայն երևակայությամբ , այլ նրանց մի մասի դեմքերը պատկերել է ըստ մեր մեծերի դիմանկարների, այն մեծերի , որոնք նույնպես զոհվել են հայրենիքը շատ սիրելու համար: Ավարայրի հերոսները ունեն Կոմիտասի, Վարուժանի, Չարենցի , Պարույր Սևակի և մեր ուրիշ հայրենասեր մտավորականների դեմքերը: Նա դիմել է գեղարվեստական մեկ այլ հնարանքի: Պարսից զորքի գլխին դրել է գերմանական ֆաշիստների զինվորական սաղավարտները՝ խորհրդանշելով , թե բոլոր նվաճողները նույնն են՝ բոլոր դարերում: Այս բացատրությանը անհրաժեշտ է զուգակցել Գրիգոր Խանջյանի նկարի պատճենների ցուցադրմամբ (Նախապես պատրաստել եմ սահկահանդես )

Ահա այս մեկնաբանությունից հետո  անդրադառնում եմ Ռաֆֆու «Սամվել» վեպի գեղարվեստական հնարանքներին:

Վիպական գործողությունները տեղի են ունենում չորրորդ դարի վաթսունական թվականներին, մինչդեռ նրանում գործող պատմական դեմքերից են Մեսրոպ Մաշտոցը և Սահակ Պարթևը, որոնք այդ ժամանակ փոքրահասակ երեխաներ էին և չէին կարող հայրենիքի պատմական ճակատագրի մեջ  վճռորոշ դեր կատարել: Ռաֆֆին այդ փոփոխությամբ հարստացրել է վեպի գաղափարական հագեցվածությունը և հայրենասիրական լիցքավորումը:  Փորձելով վեր հանել հայրենասիրական վեհ գաղափարներ,  վերը  նշված պատմական անձանց կատարած գործողությունների  պատմական ժամանակաշրջանը ենթարկել է փոփոխության :

Ռաֆֆին «Երեք երիտասարդ ուժեր » գլխում ներկայացնում է, թե ինչպես են վերլուծում ստեղծված կացությունը՝ Մեսրոպ Մաշտոցը, Սահակ Պարթևը և Սամվելը: Նրանք հանգում են այն հետևության, որ պարսիկները ձգտում են ոչնչացնել հայոց լեզուն և քրիստոնեության փոխարեն պարտադրել զրադաշտական կրոնը : Հայերը չունեն հոգևոր զենք հակառակորդին դիմագրավելու համար : Հայ եկեղեցիներում աղոթքները կատարվում էին հունարեն կամ ասորերեն , դպրոցում ընդունված էր օտարալեզու կրթություն: Երիտասարդ մտածողները հղանում են իրենց հայրենասիրական առաքելությունը: Սահակ Պարթևը հանձն է առնում հայերեն դարձնել հայ եկեղեցու արարողությունները , կրթությունը դարձնել ազգային, իսկ Մեսրոպ Մաշտոցը պատրաստվում է վերստեղծել հայոց մոռացված տառերը: «Ո՞վ կարող էր մտածել, - գրում է Ռաֆֆին,- որ այդ գիշերվա ջերմ վիճաբանություններից քսաներեք տարի հետո , այդ երկու նշանավոր տաղանդները կկատարեին իրենց ուխտը և սկիզբ կդնեին հայոց մեծ լուսավորության ոսկյա դարին»:

«Սամվել» վեպին գեղարվեստական հմայք են տալիս բնության նկարագրություններն ու ավանդապատում զրույցները,որոնք ներկայացված են ռոմանտիկական բարձր հանդիսավորությամբ: Բնությունն ու ավանդությունն ամենուրեք հանդես են գալիս որպես հոգեբանական վիճակները խտացնող պատկերավոր այլաբանություններ: Ահա, օրինակ, «Իշխանաց կղզու» բնանկարը:«Գեղեցի՜կ էր կախարդական կղզին՝ յուր վայրենի չքնաղության մեջ: Որքա՜ն սեր, որքա՜ն արտասուք թափվել էր այնտեղ: Գալիս էր երբեմն Սյունյաց իշխանը,յուր հետ բերելով յուր հարճերի և յուր նվագածուների բազմությունը: Նվագարանները հնչում էին, հարճերը պարում էին , գինին հեղում էր արծաթյա մեծ գավաթներով և ամբողջ գիշերները լուսանում էին ուրախ, անհոգ, աղմկալի խրախության մեջ» :Կղզին իր պատմական հիշողության մեջ այսպիսին էր, երբ արծաթյա փողը գուժում է Սամվելի կատարած սոսկալի գործողությունը, բնության տարերքը փոխվում է սարսափի: Հարուստ ու բազմերանգ է «Սամվել» վեպի պոետիկան: Նրա ոճը ներհյուսված է այլաբանությունների, ավանդապատումների, հոգեբանական սուր բախումների, հեղինակային հանդիսավոր խոսքի պատկերավոր արտահայտությամբ, որը մի վերին համադրության մեջ ի հայտ է բերում ռոմանտիկական արվեստի հմայքն ու գեղեցկությունը:

Ռաֆֆու «Սամվել»-ի ուսուցման ընթացքում կարևորագույն խնդիր է գրողի լեզվի և ոճի ընկալումը: Սա օգնում է ստեղծելու միջառարկայական կապը հայոց լեզվի հետ: «Սամվել»-ը գրաբարյան բառագանձի հետ աշակերտի առաջին լայնածավալ շփումն է:

Այս մեթոդական մոտեցումները կհանգեցնեն հետևյալ ցանկալի արդյունքներին աշակերտը եռանդուն ձևով կմասնակցի հայ գրականության դասին , կբացառվի բնագիր չընթերցելը , որովհետև աշակերտը չի կարողանա կատարել դասի հետ կապվող որևէ առաջադրանք, բոլոր աշակերտները կհաղթահարեն ծրագիրը , անհնար կդառնա այլ սուբյեկտի խառնվելը աշակերտի ուսուցման գործընթացին , որը հիմնված է ինքնուրույն աշխատանքի վրա , աշակերտը կդառնա ինքնավստահ , կսովորի ինքնուրույն դատել , կմեծանա ինքնապատասխանատվությունը, որը ուսուցման և կրթության վերջնական նպատակներից է:

Ժամանակակից ուսուցողական համակարգը ուսուցչի առաջ դնում է մի շարք այլ խնդիրներ ընթերցման մեթոդիկա , ուսուցողական մեթոդիկա, մեկնաբանական , բացատրական ուսուցում, դասի նախաբան, լեզվական , ոճական վերլուծություն, համեմատական ուսուցում , բնագրից դուրս ուսուցում , հիմնահարցերի խմբավորում:

Այս բոլոր մեթոդական տարաբաժանումները կատարվում են ապահովելու համար ուսուցիչ-աշակերտ , աշակեռտ –ուսուցիչ կապը:

<<Սամվելը >> պատմավեպի ուսուցման մեթոդական մոտեցումները կարող են գործել ավագ դպրոցում անցնելիք ևս երկու կարևոր պատմավեպերի ժամանակ . Մուրացան՝ <<Գևորգ Մարզպետունի>> , Դեմիրճյան ՝ <<Վարդանանք>> :

Եզրակացություն

Առաջարկում եմ « Սամվել» պատմավեպի ուսուցման ժամանակ ,ցանկալի արդյունք ստանալու համար կիրառել հետևյալ դրույթները՝

1)Բնագրի ընթերցում

2)Սովորողների անհատական կարծիքների լսում

3)Կազմակերպել վեպի լավագույն հատվածների ընթերցում

4) Կատարել կերպարների վերլուծություն

5)Ինքնուրույն մտածողության զարգացում

6)Ստեղծագործական աշխատանք

7)Ինքնուրույն վերականգնել հայերի հնագույն կյանքը (գրել փոքրիկ պատմվածք կամ գեղարվեստական այլ արժեք ստեղծել)

8)Նյութի ամբողջական յուրացում

9)Գիտելիքի հարստացում

10)Ինքնապատասխանատվության զարգացում

11) ՏՀՏ-ի կիրառում(սահկահանդես)

12) Տարբերակել սովորողների մտային հնարավորությունները

13)Զարգացնել գրականագիտական գիտելիքները

14)Երևակայական մտածողության զարգացում և…..

Այս մոտեցումները կտանեն նրան,որ աշակերտը , իր ուժերի ներածի չափով , կմասնակցի հայ գրականության դասին, բնագրի ընթերցումը կդառնա պարտադիր պահանջ, որովհետև նա չի կարողանա կատարել իր առաջադրանքը և ստպված կընթերցի բնագիրը, կմեծանա ինքնապատասխանատվությունը,

կկարողանա վերլուծել դրական և բացասական կերպարները, կդառնա վստահ, և , որ ամենակարևորն է անհնար կդառնա սուբյեկտի մասնակցությունը:

Այս բոլոր աշխատանքները կամրապնդեն ուսուցիչ- աշակերտ կապը:

Օգտագործված գրականություն.

1.Մովսես Խորենացի «Հայոց պատմություն»

2. Փավստոս Բուզանդ «Հայոց պատմություն»

3.Ռաֆֆի, Երկերի ժողովածու, հատոր 7

4. Հայ քննադատության պատմություն, հատոր1

5. Հայ գրականության դասագիրք

6. Համացանց